Funded by the European Union and the Council of Europe

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Implemented by the Council of Europe

ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԼԱՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ (ԳԼԿ II) 2019-2022ԹԹ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ

Ո՞րն է ծրագրի նպատակը

- Զարգացնել Արևելյան գործընկերության (ԱլԳ) երկրների կարողությունները՝ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների դեմ պայքարի և դրանց կանխարգելման նպատակով՝ *սնեռվելով տարածաշրջանի համար ընդհանուր մարտահրավերներին և խթանելով նոր գործիքների ու մեխանիզմների ընկալումը և որդեգրումը՝ կոռուպցիայի, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ արդյունավետորեն պայքարելու համար:*

Ովքե՞ր են ծրագրի շահառուները

- Լայն հասարակությունը
- Քրեական արդարադատության ոլորտը
- Մասնագիտացված հակակոռուպցիոն մարմինները
- Ֆինանսական հետախուզության մարմինները (ՖՀՄ)
- Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի գործում վերահսկող մարմինները
- Կենտրոնական մակարդակի՝ քաղաքականության խորհրդատվական հաստատությունները
- Պատգամավորները և բարձրաստիճան պաշտոնյաները

Ինչպե՞ս է իրականացվում ծրագիրը

- Քաղաքական/օրենսդրական և կարողությունների զարգացման միջոցառումների համադրմամբ:
- Տնտեսական հանցագործության դեմ պայքարի նոր գործիքների և մեխանիզմների ներդրմամբ:
- Հակակոռուպցիոն ոլորտում համագործակցության արդյունքների վրա հիմնվելով:

Ի՞նչ արդյունք ենք ակնկալում

- Կոռուպցիայի կանխարգելման արդյունավետ միջոցների կիրառում:
- Կոռուպցիայի դեմ պայքարի բարելավված օրենսդրական և ինստիտուցիոնալ շրջանակ:
- Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման և բացահայտման արդյունավետ միջոցների կիրառում:
- Ընդլայնված (անդրսահմանային) համագործակցություն և կարգավորող դաշտ՝ ուղղված հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների առգրավմանը և բռնագանձմանը:

http://partnership-governance2-eu.coe.int

Որքա՞ն է ծրագրի արժեքը

- Ընդհանուր բյուջեն կազմում է 814 000 եվրո։
- Ծրագիրը 80%-ով ֆինանսավորվում է ԵՄ-ի և 20%-ով՝ Եվրոպայի խորհրդի կողմից։ Ծրագիրն իրականացնում է Եվրոպայի խորհուրդը։

Որքա՞ն է ծրագրի տևողությունը

- Ծրագրի տևողությունն է 2019 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը։

Ինչպե՞ս ստանալ հավելյալ տեղեկություններ

- Ծրագիրն իրականացնում է Եվրոպայի խորհրդի Հանցավորության դեմ պայքարի բաժինը՝ Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների և համագործակցության իր բաժանմունքի միջոցով (Մարդու իրավունքների և օրենքի գերակայության հարցերով գլխավոր տնօրինություն)։

Ծրագրի թիմը Ստրասբուրգում՝

<u>Ծրագրի թիմը Ստրասբուրգում՝</u>

- Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների և համագործակցության բաժանմունքի ղեկավար
  Էլ.փոստ՝ mustafa.ferati@coe.int
- Եվգենի Եվգենիև
  I-ին տորաբաժանման ղեկավար
  Էլ.փոստ՝ evgeni.evgeniev@coe.int
- Նաչո Էսպինոզա
  Ծրագրի համակարգող
  Էլ.փոստ՝ignacio-jose.espinosa-goded@coe.int

Սա տարածաշրջանային ծրագիր է, որն ընդգրկում է Արևելյան գործընկերության երկրները (Հայաստան, Ադրբեջան, Բելառուս[1], Վրաստան, Մոլդովայի Հանրապետություն և Ուկրաինա), և իրականացվում է «Գործընկերություն հանուն լավ կառավարման» ծրագրի շրջանակներում (2-րդ փուլ կամ ԳԼԿ II)։

2014 թվականի ապրիլին Եվրոպական միությունը և Եվրոպայի խորհուրդը համաձայնել են, որ թիրախային համագործակցության միջոցառումները ԵՄ Արևելյան գործընկերության երկրների՝ Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Մոլդովայի Հանրապետության, Ուկրաինայի և Բելառուսի հետ կիրականացվեն «Գործընկերություն հանուն լավ կառավարման» ծրագրի շրջանակներում։ Ծրագրի 1-ին փուլը (ԳԼԿ I) մեկնարկել է 2015 թվականին և ավարտվել 2018 թվականին։ Ծրագրի երկրորդ փուլը (ԳԼԿ II) մեկնարկել է 2019 թվականին և կտևի մինչև 2022 թվականի օգոստոս ամիսը։

Համագործակցության այս միջոցառումները կհզորացնեն Արևելյան գործընկերության երկրների կարողությունները, որոնք Եվրոպայի խորհրդի անդամ պետություններ են, բացառությամբ Բելառուսի՝ մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության ոլորտներում եվրոպական չափանիշներին ավելի սերտ հաղորդակից դարձնելուն միտված ներպետական բարեփոխումներ իրականացնելու նպատակով։

---

[1] *Բելառուսում ստեղծված քաղաքական իրավիճակով պայմանավորված՝ այդ երկրի հետ համագործակցային միջոցառումները կասեցված են և ԳԼԿ II-ի իրականացման մնացյալ ժամանակահատվածի համար դեռևս նոր գործողություններ նախատեսված չեն՝ Եվրոպական միության ընդունած սահմանափակող միջոցների համաձայն։*